




Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:
Սահմանին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամէն լիւրով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ՆԵՐԿԱՅ 1888 ԹԻՒՆ

„ՄՇԱԿ“

ԴՐԱՄԱՆՆԵՐԵՐ ԵՒ ՔՆՆԱՔԱՆՆԵՐ ԼՐԱԳԻՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն դիւրով և նոյն պրոպագանդայով: Մենք կը ստանանք սեփական
ՀԵՌՈՒՄԻՆԻՆԵՐ:

«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլ է, վեց ամսվանը 6 ռուբլի:

Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՐԱՄԱՊՐԱՍԱՆԸ (Խարոսկայա և Բաղարայա փողոցների ան-

կիւնում, Թամարիայի տանը):

Կայսերութեան ուրիշ քաղաքներէ «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է դիմել հետեւեալ հա-

ցէով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du jour-

nal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳԻՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տնտեսական կեանքի զարգացման արդեւտիթ-
ները.—ՆԵՐԿԱՅ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կառավարական
հաղորդագրութիւնը բազմաթիւ հարցի առիթով.
Մի նկատողութիւն. Մի հայացք Անդրկասպեան
հայերի վրա. Մարդասիրական ընկերութեան
խորհրդի գործունէութիւնը. Նամակ Խմբագրին.
Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կանանց
աշխատանքը Ֆրանսիայում. Արտաքին լուրեր.—
ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌՈՒՄԻՆԻՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՅԱՅ-
ՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՏԵՍՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԱՐԳԵԼԱ-
ՌԻԹԵՐԸ

Ամբողջ Անդրկովկասի մէջ ամենահա-
րուստ նահանգ կարելի է համարել Երե-
ւանեան նահանգը, բայց ցաւալին այն է,
որ այդ նահանգի վրա ամենից քիչ ուշա-
դուլութիւն է դարձնում: Բացի ամենալաւ
ցորենից, այդ նահանգը ամենաթանձագին
բնական բերքերի ծննդավայրն է. հրաշալի
մրգեր, ու խաղող, որոնց նմանը գուցէ ամ
բոլոր աշխարհիս երեսին չը կայ, բանջա-
րեղէններ, բրինձ, բամբակ, շերամ և այ-
լին.—այդ բոլորը Երևանեան նահանգում
այն աստիճանի գերազանց է, որ մեր երկրի
միւս նահանգները անկարող կը լինեն
մրցել Երևանեան նահանգի արդիւնաբե-
րութեան հետ, եթէ յիշեալ նահանգը ու-
նենար ձանապարհներ, երկաթուղիներ, իր
ամայի, բայց վերին աստիճանի բերրի հողեր
ուղղորդ ջրանցքներ....

Երկաթուղիների և հասարակ ձանա-
պարհների, նոյնպէս և ջրանցքների բացա-
կայութիւնը այդ նահանգում կարող է ա-
մենամեծ արդեւտիթ համարվել նահան-
գի տնտեսական լայն, ընդարձակ կանոնա-
ւոր զարգացման:

Վերջին տարիները Երևանեան նահանգի
տնտեսական զարգացմանը մի նոր և ան-
սպասելի զարկ տրվեցաւ: Այդտեղ եկան
ուսու կապիտալիստները և սկսեցին աշա-
ղին քանակութեամբ բամբակ առնել:
Բամբակի մեծ պահանջը առաջ բե-
րեց ազդեցիկութեան մէջ նոր և եռան-
դոտ կեանք. շատերը սկսեցին բամբակա-
նութեամբ պարագել, բամբակի պլանտա-
ցիաները կարճ ժամանակում ընդարձակ
զարգացում ստացան, շատերը դարձան
իրանց հողերի վրա ցորեն ցանել և ցորե-
նի տեղ այժմ բամբակ են ցանում: Բայց
որովհետեւ բամբակի բոլոր աճեցնելու հա-
մար ջրի մեծ քանակութիւն է պահանջ-
վում, շատերը աշխատում են անշուր հողե-
րի վրա ջուր անցկացնել: Գիւղացիներից շա-
տերը, թէ հայ և թէ թուրք, կարճ ժա-
մանակում հարստացան այդ արդիւնաբե-
րութեան շնորհիւ, որ նոր և անսպասելի
ընդարձակութիւն ստացաւ: Մեզ պատմում
են, որ հայ և թուրք գիւղացիներից շա-
տերը, որոնք երեք, չորս տարի առաջ կա-

տարեկապէս աղքատ էին, այժմ բամբակի
արդիւնաբերութեան զարգացման շնորհիւ
նշանաւոր կերպով հարստացան և քիչ չէ
պատահում տեսնել այն տեսակ գիւղա-
ցիներին, որոնք այժմ 10-ից մինչև 15
հազար ռուբլի դրամաւորու ունեն:

Բամբակազորութեան այդ տեսակ ըն-
դարձակ զարգացմամբ Երևանեան նահան-
գը զլխաւորապէս պարտական է երկու
ուսու հարուստ ֆիրմաներին, այն է Կը-
զիկինի և Ալեքսէյի ֆիրմաներին: Մօսկ-
վայի այդ երկու ֆիրմաները, մանաւանդ
առաջինը, ունեն Երևանում իրանց մշտա-
կան ագենտներ և տարեկան ահապիւր քա-
նակութեամբ առնում են բամբակը Երևա-
նեան նահանգում ու արտահանում այդ
բամբակը դէպի Ռուսաստան: Տեսնելով որ
գործը սպասածից աւելի աշուղ է դնում,
ուսու ֆիրմաները, չը բաւականանալով
բամբակի գնելով, իրանք սկսեցին հողեր
կապալով վերցնել, նոյն իսկ առնել հողե-
րը, աշխատում են կապել կալուածատե-
րերի կամ գիւղական համայնքների հետ,
ընդհանուր դիտելով անշուր տեղերում
ջրանցքներ անցկացնելու դիտաւորութեամբ
և, ինչպէս լսում ենք, դիտաւորութիւն
ունեն մի քանի տեղերում ձանապարհներ
շինել և մինչև անգամ իրանց հաշուով Ե-
րևանից դէպի Շարուր երկաթուղու մի
գիծ կառուցանել:

Մենք ստեղծեց, որ Երևանեան նահանգի,
մեր երկրի այդ ամենահարուստ նահանգի
տնտեսական կանոնաւոր և ընդարձակ զար-
գացման ամենամեծ արդեւտիթներից մին
ձանապարհներ, երկաթուղիների և ջրանցք-
ների բացակայութիւնն է: Բայց կայ և մի
երկրում պատճառ, որ արդեւք է դնում այդ
երկրում տնտեսական խաղաղ և կանոնաւոր
զարգացմանը. դա ազդեցիկութեան ազի-
տութիւնը և վայրենի ֆանատիկոսութիւնն
է, դա այն երկպառակութիւնն է, որ մա-
նաւանդ վերջին տարիներում, անպակաս
է լինում նահանգի հայ և թուրք, այսին-
քն քրիստոնեայ և մահմետական ազգա-
բնակութեան մէջ: Երևան քաղաքում և
նահանգի գիւղերում վերջին օրերում պա-
տահած արիւնահեղ դէպքերը հայերի և
թուրքերի մէջ ապացոյց է ազդեցիկութե-
ան այդ ազդեցիկութեան, ֆանատիկոսու-
թեան, և անհեռատեսութեան: Ժամանակ
է, վերջապէս, հասկանալ Երևանեան նա-
հանգի թէ հայ և թէ թուրք ազգաբնա-
կութեանը որ իրանց փոխադրած շահերը
մէկ են, որ նահանգի ընդհանուր տնտե-
սական առաջադիմութիւնը, երկրի բարո-
ւութիւնն ու բարգաւաճումը աչքի առնել
ունենալով երկու ցեղի ազգութիւնները
պէտք է իրար մէջ հաշտ ու խաղաղ ապ-
րին, երկրի ընդհանուր շահերը և իրանց
անձնական շահերը աչքի առնել ունենալով
հայր և թուրքը պէտք է սիրով միաբան-
վեն, միասին գործեն, համերաշխ լինեն
իրար մէջ:

Երկրի քաղաքակրթական ցանկալի զար-

գացման արդեւտիթներից մէկը այդ երկ-
պառակութիւնն է երկու ցեղերի մէջ և
ցանկալի է որ յօգուտ երկրի ընդհանուր
առաջադիմութեան շուտով վերջ դրվի ա-
պարդիւն և վնասակար երկպառակութիւն-
ներին, վերջ դրվի անմիտ վայրենութեանը:

Գ. Ա.

ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱՌԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԲՈՒ-
ԳԱՐԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԱՌԻԹՈՎ

«Հիւսիսային գործակալութիւնը» հեռագրում է
մեզ փետրվարի 12-ից հետեւեալը:

Այսօր, բոլորական հարցի առիթով հրատա-
րակված է կառավարչական հետեւեալ հաղորդագրու-
թիւնը. Վերջին ժամանակներում արտասահմա-
նից ստացված մամուլում հեռագիրներում հա-
ղորդում է, որ Բերլինի Կայսերական դեսպանը
առաջարկութիւններ է արել գերմանական կա-
ռավարութեանը Բոլզարիայի վերաբերմամբ: Գոր-
ծերի այժմեան դրութիւնը ճիշդ հասկանալու հա-
մար, անհրաժեշտ է աչքի առաւ ունենալ կայսե-
րական կառավարութեան սկզբում յայտնած հա-
յացքը բոլորական հարցի մասին: Բերլինի դաշ-
նագիրը, պետութիւնների ընդհանուր համաձայ-
նութեամբ, ծառայում է որպէս հիմք Բալկանեան
թերակղզու վրա սահմանված կարգերի համար և
այդ դաշնագրի մէջ է պարունակվում միակ միջ-
ազգային ապահովութիւնը թերակղզու մասնով
պետութիւնների ապագայի համար վտանգաւոր
ցնցումների դէմ: Կայսերական կառավարութիւնը
ևս հէնց այդ տեսակետից վերաբերվեց Բոլզարիա-
յում կատարված անցքերին նրա առաջին իշխանի
դասից հրաժարվելու ժամանակից: Կըստդիւն
Ֆերդինանդի իշխանի Սօֆիա ժամանակը և իշխա-
նական դասը բռնի կերպով զրաւելու կատարվե-
ցան հակառակ դաշնագրի որոշումների, այդ
պատճառով Կայսերական կառավարութիւնը այն
ժամանակն և եթ յայտնեց, որ ինքն դիտաւորու-
թիւն չունի իշխանին Բոլզարիայի օրինական կա-
ռավարի ճանաչել և միաժամանակ փորձ փոր-
ձեց համոզել միւս պետութիւններին ևս նոյն
հայեացքները յայտնել: Այժմ, աչքի առաւ ունե-
նալով ամեն կողմից յայտնվող ցանկութիւնը
վերջ դնել դոյութիւն ունեցող յուզիչ դրութեա-
նը, որի արմատը ծածկված է Բոլզարիայի երկ-
միտ դրութեան մէջ, Կայսերական կառավարու-
թիւնը պարզ համարեց նորից մի փորձ անել
համոզելու պետութիւններին, որպէս զի նրանք
յայտնեն Բոլզարիայի վերաբերեալ դաշնագրա-
կան որոշումների անձեռնմխելիութիւնը և Բոլ-
զարիան օրինական ճանապարհի վրա դնելու ան-
հրաժեշտութիւնը: Պետութիւնների այդպիսի յայ-
տարարութեան բնական հետեւեալ պէտք է լինի
այն առաջադրութիւնը Կ. Պոլսում, որ պէտք է
անելին պետութիւնները սուլթանին համոզելու
համար, որ նա, սուլթանը, յայտնէր բոլորներին,
որ իշխանի անուն կրող անձնաւորութիւնը Բոլ-
զարիայի ապօրինի կառավարիչ է, և միայն իշ-
խանութիւն յափշտակող է: Կայսերական կառա-
վարութեան կարծիքով, այդպիսի յայտարարու-
թեան նախաձեռնութիւնը, անկասկած, պատկա-
նում է սուլթանին, որի իրաւունքները, որպէս
սուլթանի, անմիջապէս վնասվում են Սօֆիա-
յում գոյութիւն ունեցող ապօրինի գործերի դրու-
թեան պատճառով: Չը նախադրեալեալով ապա-
գան, Կայսերական կառավարութիւնը, իր նպա-
տակներին և դիտաւորութիւններին վերաբերեալ
հասկանալով փարատելու համար, հարկաւոր չէ
համարում ծածկել իր գործողութեան եղանակը,
որին հաստատապէս վճռել է հետեւի բոլորա-
տող պատճառները հեռացնելու դէպքում: Բոլզա-
րիան իր գոյութեամբ պարտական է Ռուսաստա-
նի արած զոհերին և թափած ճիւղերին, որը հէնց
միայն այդ հիման վրա, շարունակում է համակ-

րութեամբ վերաբերվել այդ երկրին և խորին ցա-
ւով ականատես լինել այդ երկրի կրած փորձանք-
ներին, դէն գցելով ամեն տեսակ նախապաշար-
մունքներ և կրքեր, և այդ պատճառով անհամա-
պատասխան համարելով իր արժանաւորութեան
համար խառնվել ներքին երկպառակութիւնների
մէջ: Կայսերական կառավարութիւնը հեռու է
նոյնպէս անցեալի համար ում և իցէ պատասխա-
նատեսութեան ենթարկելու մտքից: Սակայն, մո-
լորութեան անկեղծ խոստովանութիւնը Կայսերա-
կան կառավարութեան աչքում գրաւական կը լի-
նի, որ գործը լաւ ուղղութիւն է ստանում իսկ
Ռուսաստանը բացառապէս Բոլզարիայի բարօրու-
թիւնն է ցանկանում և, իշխանութիւնը յափշտա-
կողին հեռացնելուց յետոյ, Ռուսաստանը, Բոլզա-
րիայի ներկայացուցիչները միջոցով, բոլորական
ժողովրդի կողմից առաջին անկեղծ յայտարարու-
թիւնը լսելուց յետոյ, մոռացութեան կը տալ
անցեալը և կը հոգայ փոխադրած վտանգութեան
վրա հիմնված յարաբերութիւնների վերականգնման
մասին. մի և նոյն ժամանակ Կայսերական կա-
ռավարութիւնը դիտաւորութիւն չունի որ և է
բանով ճշուում գործ դնել Բոլզարիայի ապատու-
թեան վրա, որ ապահովված է դաշնագրով և որ
վերաբերում է բոլորական երկրի ներքին կաղ-
մակերպութեան և վարչութեանը: Կայսերական
կառավարութիւնը չէ կարող մոռանալ, որ Բոլ-
զարիան իր ազատութեամբ պարտական է պա-
սելապէս Ռուսաստանին և որ մեր ուղղակի կո-
չումն է ոչ թէ ոտնակոխ անել, այլ պաշտպանել
Բոլզարիայի ժողովրդի իրաւունքները, միայն թէ
ժողովրդին առաջնորդելու կողմից անձինքն ևս
իրանց կողմից դիտնալին խոսնակութեամբ գործ
դնել այդ իրաւունքները, համոզվել, վերջապէս, որ
անհրաժեշտ է հրաժարվել անձնական ձգտումնե-
րից և հաշիւներից և միացնել իրանց ոյժերը ի-
րանց հայրենիքը օրինականութեան և բարեկեցու-
թեան ճանապարհի վրա դնելու. նպատակով և
այդ դէպքում, ամեն կողմնակի միջամտութիւն
աննպատակ և աւելորդ կը լինի և ապագայ իշ-
խանի հաստատութիւնը անարգել կը կատարվի
դաշնագրով որոշված պայմաններով: Կայսերական
կառավարութիւնը չէր զարգացնում առաջնորդվել
վերջինեալ հայեացքներով բոլորական ճգնաժա-
մի հէնց սկզբից և հէնց դրանք զորեցին իրան
սկզբներում մերժել բռնի միջոցների օգ-
նութեամբ օրինականութիւնը վերականգնելու
հարաւորութեան միտքը: Չը նայելով այդ բոլո-
րին, ինքն իրան հասկանալի է, որ մինչև կը հե-
ռանայ Բոլզարիայից իշխանութեան յափշտակողը,
Կայսերական կառավարութիւնը կը շարունակէ
ապօրինի համարել այդ երկրում գոյութիւն ունե-
ցող գործերի դրութիւնը, համոզված լինելով, որ
այդ դրութիւնը վերացնելու մէջն է կայանում
ամենայնուայի դրաւական ընդհանուր հանգստու-
թիւնը ամբողջովին համար:

ՄԻ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆ

Էլմիսնի «Արարատ» ամսագրի վերջին տետ-
րակում կարդում ենք հետեւեալը. «Միջոցի գոր-
ծերից երևում է, որ Բեսարաբիայի, Ղարաբաղի
և Աստրախանի թիմերը նախաձեռնադիր լինելով
Աթոռի և ճեմարանի բարգաւաճման, չեն դա-
դում վիճակային արդիւնքներից մասն հանել
թէ ճեմարանի և թէ Աթոռի համար Երևանի
թիմի արդիւնքներն էլ ամբողջապէս մոտում են
Աթոռի զանաւարան, միայն Վրաստանի արդիւ-
նաւատ և բազմամարդ թիմն է մնում անմասն.
ուստի հրամայեցաւ այսուհետեւ այդ թիմի մե-
րիքական վկայագրերից գոյացած արդիւնքը ամ-
բողջապէս վերադարձնել յոյուն ճեմարանի»:

Այդպիսի կարգադրութիւն անելու աւելի քան
զարմանալի է: Զարմանալի է, որովհետեւ վերջուց
պէտք է հասկանալին, թէ ճեմարանի և Աթոռի
ծախսերը ծածկելու և առհասարակ Էլմիսնի
օրից օր մեծացող ծախսերը հոգալու համար ոչ

Թէ պէտք է թեմական բոլոր արդիւնները հաւաքել էջմիածին, զրկելով այդպիսով թեմերը նիւթական միջոցներից, այլ պէտք է կանոնաւորութիւն մտցնել էջմիածնի իր անմիջական տնտեսութեան մէջ, որով միայն կարելի է մի կողմից այդ տնտեսութիւնը ազատել վերջնական քայքայումից, իսկ միւս կողմից էլ մի փոքր փող հաւաքել դատարկացած դանձարանի մէջ: Յայտնի է ամենքին, թէ որքան ահագին եկամուտների աղբիւրներ ունի էջմիածինը. յայտնի է նոյնպէս, թէ ինչ զգալի մաս են տալիս նորան բոլոր հայ եկեղեցիները, սկսած ամենամեծ քաղաքներից մինչև ամենամիջոց դիւղերը: Էջմիածնի տնտեսութեան հետ փոքր ի շատէ ծանօթ եղողներին յայտնի է, թէ տարեկան քանի տասնեակ հազարներ են թափվում վանքի դանձարանը ամեն կողմերից: Չը պէտք է մոռանալ, որ այդ տասնեակ հազարները կօպէկ-կօպէկ հաւաքված փողեր են: Նոյն իսկ եթէ այդ, այսպէս ասած, թեմական արդիւնները մի կողմ թողնենք, էջմիածինը կարող է հոգալ իր ծախսերը նոյն իսկ այն եկամուտներից, որոնք գալիս են անմիջապէս վանքին պատկանող հողերից և ուրիշ տեսակ կալուածներից, եթէ միայն դոցա վրա հոգս տանվի, և կանոնաւոր տնտեսութիւն մշտնջուրի Բայց փոխանակ տնտեսութիւնը և ծախսերը չափաւորելու, այժմ թեմերի բոլոր արդիւններն են հաւաքվում էջմիածնի դանձարանը: Այդ կենտրոնացումը ուսումնական վարդուց յայտնի է արդէն, որ շատ վնասակար է: Միթէ թեմերը չունեն իրանց ցաւերը. միթէ թեմերը նիւթական միջոցների կարօտութիւն չունեն. միթէ թեմերը փողի կարօտութիւն չունեն ինքնուրոյնաբար մի որ և է գործ տեսնելու համար: Հաւաքելով թեմական բոլոր արդիւնները Աթոռի դանձարանը և զրկելով թեմերին բոլոր միջոցներից, միթէ չէ նշանակում զրոյի հասցնել թեմերի գործունէութեան ոյժը՝ տեղական պէտքերի վերաբերութեամբ: Եւ ո՞վ կարող է երաշխաւորել, որ Աթոռի դանձարանը՝ այդ եկամուտները սեփականացնելով, վաղը կամ միւս օրը գէթ մի քանի կօպէկ կը տայ թեմի մէջ մի որ և է զուրկողին օգնելու, կամ մի որ և է խաբուել եկեղեցի նորոգելու համար: Բայց դարմանալի էլ չէ, որ այդպիսի բան երբէք չի պատահի, որովհետև չը նայած որ բոլոր արդիւնները ամեն կողմերից էջմիածնի են հաւաքվում, դրա դանձարանը այնուհետ ամենայնիւ հարուստ չէ: Ինչպէս չէ կենտրոնը հարստացնելու համար իսկ ճիւղերից նրա եկամուտները.— դա մի սխտեմ է, որ բացի վնասից ոչինչ օգուտ չի տայ:

ՄԻ ՀԱՅԵԱՅԳ ԱՆԴԿԱՍՍՊԵՆՆ ՀԱՅԵՐԻ ՎՐԱ

Ես ժամանակաւորապէս Բագուից դնալով Անդրկասպեան երկիրը՝ համարեա եղած եմ ամենայն նշանաւոր տեղերում, այն է՝ Ալիսարազում, Գըղ-Արվատում, Մերվում, Չարշոյում և Կրասնավոդսկում, սակայն ցաւելով պիտի ասեմ, որ ոչ մի տեղ չը գտայ մի միջնորդական երկույթ հայերի վերաբերմամբ, և նոյն իսկ անհասկանալի մնաց ինձ համար այն գաղտնիքը, թէ ինչ է պատճառը որ Անդրկասպեան երկիրը բաղամթիւ մարդկանց դրաւում է դէպի իրան, այնպէս որ մի ուստատեղիի նման կարճ միջոցում այս ու այն կողմից բաղդախնդիր մարդիկ այնքան թափվել են այդտեղ, որ գործ անգամ չէ ձարվում մեծ մասի համար: Հայերի թիւը առհասարակ շատ է ուրիշ ազգերից, որոնք բոլորն էլ թողնելով իրանց հայրենիքը, սուս ու տեղը, և շատերն էլ առանց գործի, աննպատակ թափվում են քաղաք տնտեսականութեամբ տարիններով:

Հայերը պարապվում են գլխավորապէս առևտրականութեամբ (աւելի լաւ է ասել չարչիութեամբ), կապալառութեամբ և դանապան մանր գործերով: Ամեն տեղերում կը հանդիպէք մի քանի շարք մանրավաճառ խանութպանների, որոնց մօտ կարելի է գտնել ամեն տեսակի դանազան մանր մուսեր, ջնշին ապրանքներ: Պէտք է խոստովանած, որ դրանցից մեծ մասը ոչ այլ որ է, եթէ ոչ երէկվայ կոչու ու կոպիտ սալապանք, խոհանարար, լակելը, կօշկակարը, դերձակը, դարբինը, հիւանդ, ոսկերիչը, գործից վաճառ գործակատարը և մի շարք էլ թոկից փախած մարդիկ, որոնք առաջվայ կոչը և աջող ժամանակամիջոցում բաղդի բերմամբ թիւ փող ձեռք բերելով, սկսել են անմիջապէս մի մանրավաճառի խանութ

բանալ և շատերն էլ պատահմամբ տիրացել են դանազան դէպքերում հարկերների կամ հաղարհներ, բայց մի և նոյն ժամանակ այն էլ վատնել են, որը շուրջ և անբարոյական կեանք անցկացնելով, որն էլ այստեղ և այնտեղ շինութիւններ շինելով, որոնք այժմ դնի մէջ ընկած, դատարկ մնացին և այլ ևս ոչինչ չա՛հ չեն բերում: Կարելի է հաստատ ասել, որ շատ քիչ անհատներ կան, որոնք պահած լինէին իրանց վատաւարութեան ծես թէ 87 թուականը դարձաւ Անդրկասպեան երկրի հայերի փորձաքարը: Անաջողութիւնները մի առ մի երևան են գալիս իրանց բուն նշանակութեամբ. առևտուրը սաստիկ ընկած է, շատերը իրանց ամբողջ ունեցածը կորցրել են, իրանց պարտքերը չը կարողանալով վճարել, շատերը փախում են և շատերն էլ ստիպված՝ պիտի սահմանափակեն իրանց առևտուրը, մի մասն էլ դանազանութեամբ քանադայական վրա դառանցութեան մէջ է, մնացածներն էլ պարապվում են միմեանց դէմ աննպատու դատարանական գանդառներով: Մինչև այժմ առևտուրը կայանում էր Բագուից ապստիկ ապրանք առնելում ու ծախսելում և ամեն մարդ էլ առանց խորութեան կարողանում էր ապստիկ առնել ու ծախել, իսկ այժմ քանադայական շնորհով ոչ կարողանում են առնել և ոչ ծախել: Վերջապէս մի հայեացք ձգելով Անդրկասպեան հայերի վրա, մարդ ակամայ ցաւում է նրանց ողորմելի դրութեան մասին. հայերը այդտեղ, բացի մի քանի յայտնի մարդկանցից, առհասարակ կարծում են մի տեսակ անհամար կրելի, տարօրինակ խառնուածք, որը չարունակաբար աղտոտելով հայութեան անունը, ոտի տակ է ձգած իր վարքը ու բարքը, նիստ ու կացը, և միանգամայն փչացած է: Այդ մարդիկ իւրաքանչիւր քայլափոխում կօպէկի համար ստորութեամբ կը ծախեն ամեն բան, և հետեւաբար ամեն տեսակ կեղտոտ յատկութեան տէր մարդկանց, որոնք իրաւ կազմում են մարդկութեան հակապատկերը, կարող էք գտնել Անդրկասպեան երկրում: Մտովիները, խաբեղալուծիները, կեղծաւորութիւնը, խաբողախութիւնը, անմիաբանութիւնը, անբարոյական լիտի կեանքը, ուժեղների առաջ ընկնելը, նախանձութեամբ միմեանց վնասելը ու ոտի տակ փախ փորելը, անխղճօրէն ընկերին, եղբորը և ծնողին զրկելը, արբեցողութիւնը, միմեանց ջգրու թանգ գնով ապրանք գնելը ու էծան ծախելը և իւրաքանչիւր մի չնչին և անտեղի բանի համար դատարան ընկնելը.— արդէն մարմնացած է այդտեղի հայ կօյունայի մէջ: Առանց դատարանի ոչինչ գործ բռնել Անդրկասպեան երկրում անհնարին է և այստեղ նոր եկողներին ու գործ ունենալ ցանկացողներին էլ խորհուրդ կը տայինք մի քայլ անդամ չանել առանց օրինաւոր ծոցում պահելու....

Ամբողջ Անդրկասպեան երկրում նշանաւոր է միայն Ալիսարազը իր դիրքով և բազմամարդութեամբ. հայերը ունեն մի նորայէն եկեղեցի, հանդերձ երկու տղէտ տիրացուներով և մի քանիստով, որ մի կերպ կառավարում է ժողովուրդը երբեմն հաշտ, երբեմն խռով այս ու այն անհատի կամ խմբի հետ: Չը նայելով որ այդպիսի տեղերում հարկաւոր էր մի գլխուս, օրինաւոր քանակայ և մի և նոյն ժամանակ ազգու քարոզիչ, որ քարոզելով կարողանար գտնւել ուղիղ այդպիսի խառն մարդկանց մօտը ընթացքը, ինչպէս ասում են, շուտով պիտի քանադայ ձեռնադրվի տեղական մի վաճառական, որ արդէն դրա համար թողաւ թիւն է ստացել էջմիածնից, բայց ցաւում ենք որ նա էլ չը պիտի դանազանվի այժմեան քանադայից:

Բ.

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՐԻ ԹԻՒՆԵՐԻ

Բագուի Մարդասիրական ընկերութեան վերջին ընդհանուր ժողովը հաշիւներից երևում է, որ ընկերութիւնը տարեկան 60 ռուբլի նպաստ է եղել տալիս Գանձակի մօտ գտնվող ս. Թարգմանչաց վանքին, իբրև թէ օգնելու համար այդ վանքի մէջ գտնվող դպրոցին: Բայց այժմ յայտնվում է, որ այդ վանքում բոլորովին դպրոց չը կայ, ինչպէս որ այդ ասված էր Վշապի անցեալ համալսարանում տպված մի նկատողութեան մէջ: Գաղտնիք չը կայ, բայց Մարդասիրական ընկերութեան խորհուրդը տարեկան 60 ռուբլի է եղել տալիս երեւաւկայական դպրոցի համար, այն ընկերութեան խորհուրդը, որը բացառում է շատ համա-

կրելի առաջարկներ, դրամական միջոցներ չունենալու պատճառով: Դա մի շատ դարմանալի միջոցառում է, որը, պարզ ասենք, արատ է զըրուս ընկերութեան խորհուրդի վրա, այն խորհուրդի, որի մասին ընդհանրապէս վատ տեղեկութիւններ չէին գալիս Բագուից: Մի որ և է մասնաւոր մարդ կարող է այլ և այլ միջոցների դիմել սրա-նից նրանից փողեր հանգանակելու համար, բայց այդ դեռ չէ նշանակում որ մի հասարակական ընկերութեան խորհուրդն էլ, որը կօշկած է պաշտպանելու ընկերութեան կօպէկները, պէտք է իր անտարբերութեամբ աշակցէ այդպիսի հանգանակութիւններին: Անտարբերութիւն ենք ասում, որովհետև չենք կամենում ուրիշ կերպ բացատրել խորհուրդի այդ սխալը: Բայց միթէ այդ տեսակ անտարբերութիւնը ներքին է մի վարչութեան, որին հասարակութիւնը իր ընտրութեամբ ահագին պատիւ է արել, բարոյական պարտք չը նկատել նրա վրա՝ եւսանդուն և աշխուրջ լինելու: Գուցէ շատերը կասեն. «60 ռուբլի է, մի մեծ կորուստ ո՞՞ չէ»: Բայց, միթէ այստեղ հարցը միայն փողի քանակութեան մէջն է: Ո՛չ, ինչպէս զիստարապէս փողի գործածութեան ձևի մէջն է, իսկ մի ընկերութեան կօպէկներով կառված ռուբլիները տալ գոյութիւն չունենցող զգրոցներին, ոչ թէ միայն ներքին չէ, այլ ուղղակի յանցանք է վերջապէս միթէ հարցը ուշադրութեան չը պիտի արժանանայ, որովհետև 60 ռուբլի է: Այսօր 60 է, վաղը կարող է 600 լինել: Եւ եթէ այդպէս դատենք, ուր կը հասնի: Այսօր մի ընկերութիւն կորցնում է ի զուր սեղը 60 ռուբլի, և ասում ենք մի մեծ բան չէ. վաղը մի ուրիշը կլինում է հասարակական փողերից 260 ռուբլի, ասում ենք ոչինչ, մեծ գումար չէ. երրորդ օրը մի այլ անձնաւորութիւն կլինում է տղաների համար հաւաքած 1500 ռուբլի, և էլի ասում ենք. ոչինչ, մեծ գումար չէ, և այլն և այլն:

Այդպիսի բարոյական սկզբունքներով ղեկավարվել չէ կարելի և այդպէս վարվել հասարակական փողերի հետ կը նշանակէ յանցանք գործել, և շատ ցաւալի է, որ այդ որոշ բարոյական սկզբունքից շեղվում է մի ընկերութեան խորհուրդը, թէ և դուցէ անգիտութեամբ: Բայց, չը պէտք է մոռանալ, որ մի ընկերութեան խորհուրդին անհերքելի է նոյն իսկ այդ անգիտութիւնը....

ՆԱՄԱԿ ԽՐԱՄԱԳԻՆ

Երևան, փետրվարի 8-ին

Քրտնավաստակ Վշապից: № 13 լուրերի շարքում կարդացի հետեւեալը. «Երևանից մեղ գրում են, որ յունիարի 24-ին այդ տեղի կուբուստ տեղի ունեցաւ պարահանդէս յօգուտ Գայեանեան օրիորդաց դպրոցի: Այս տարի այնքան աջող չէր պարահանդէսը և անցեալ տարվայ նման արդիւնք չը տուցէ: Անցեալ տարի հողաբարձուները շատ էին աշխատում տոմսակ ծախելու. իսկ այս տարի հողաբարձուները հրաժարված լինելով իրանց պաշտօնից, մինչև անգամ պարահանդէսի երեկոյեան հողաբարձուներից միայն մէկն էր ներկայ գտնվում (պատիւ իրան): Գուկիւն են տիկին Տէր-Սարգսեանի և օրիորդ Մէլիք-Աղամալանի ջանքերը դպրոցի արդիւնքը շատացնելու: Արդարեւ գովելի է:

Կարգացի և ցաւեցի: Մեր հասարակական առօրեայ կեանքում ստալոյ լուրերի, սրտամաշ զըրախտութիւնների, չարամիտ անձանց բանասերութիւնների և այսպիսի ամենատեսակ ստորաբարձ ասուլիսների մեղք սովոր ենք յաճախ հանդիպելու և յանուն սուրբ գործի սովոր ենք նաև կատարելաւ արհամարհանել արժանացնելու: Բայց ցաւ է, որ մեր հասարակութեան այդ արատաւոր պակասութիւնը ի չնորհա անբարեխիղճ լրատուների տեղ է գտնում նաև մեր մամուլի մէջ: Միթէ լրատու պարոնները գրիչ են ձեռք առնում անշուշտ իրանց կըքերին բաւականութիւն տալու կամ այս ինչ այն ինչ կուսակցութեանը հաճոյանալու: Միթէ գրիչ ձեռք առնողի մէջ հարցաքննութիւն և անաչառութիւնը բացակայ են լինելու: Միթէ այնքան միամիտ պիտի լինեն լրատուները, որ չը հասկանան թէ տեղի հաղորդելով ամենից շատ անպատուում են այն թերթին, որի մէջ հիւրընկալութիւն են գտնում իրանց նամակները: Թողնելով մեծապատիւ լրագրողներին դատարար լինելու այդ գործում, ես դառնում եմ

վերոյիշեալ լրի ստույթիւնը սպառնացանելու: Եւ սպառնացմանս փաստեր լուրի թուանշաններ եմ առաջ բերում անցեալ և ներկայ տարվայ գործերից բաղկած, որոնք (այդ լուրի թուանշանները) գործի ստուգութիւնը բաց կանեն հարցասէր ընթերցողների առաջ:

Անցեալ տարի, հողաբարձուների օրով, և այս տարի տեղիս կուբի դահլիճում յօգուտ Գայեանեան օրիորդաց դպրոցի տրված պարահանդէսի հաշիւը հետեւեալն է: Անցեալ տարի եղել է տղամարդկանց տոմսակ 200 հատ, այս տարի ևս նոյնչափ. կանանց 100 հատ, այս տարի 110 հատ: Անցեալ տարի ծախվել էր տղամարդկանց տոմսակ 111 հատ, կանանց 64 հատ. այս տարի տղամարդկանց 138 հատ, կանանց 87 հատ: Անցեալ տարի հողաբարձուք պարահանդէսի ծախս ցոյց են տուել 79 ռուբլի 50 կօպ. այս տարի ծախս եղել է 73 ռուբլի 50 կօպ: Անցեալ տարի բուժէտ չը կար, այս տարի կար, որի վրա ծախս գնացել է 24 ռուբլի 90 կօպ. և որ զուտ արդիւնք տուել է 144 ռուբլի: Անցեալ տարի ընդհանուր եկամուտ եղել է 307 ռուբլի, այս տարի 505 ռուբլի 40 կօպ: Անցեալ տարի հողաբարձուների ժամանակ զուտ արդիւնք դպրոցին մնաց 227 ռուբ. 50 կ., այս տարի 407 ռուբլի:

Որովհետև յաճախ պատահում է կարգաւ թերթի մէջ Երևանից լուրեր ժողովրդի դէպի զըրոցս համակրութեան կամ հակակրութեան վերաբերմամբ, այս պատճառով աւելորդ չեմ համարում դնել այստեղ դպրոցի ներքին տեղեկութիւնների մասին համակրութեան թուանշանները: Անցեալ տարի աշակերտահիւների բոլոր թիւը այս իսկ ամսում 111 էր, այժմ 141 է: Անցեալ տարի թոշակադրամ ստացվել է 1,376 ռ., այս տարի համարում է 1,574 ռուբլու, ձրիվարձ էին 18 հօդի, այժմ 20 հօդի: Անցեալ տարի 3 դասարան կար, 8 ուսուցիչ և ուսուցչուհի (8-ից մէկը ձրի) 2,016 ռուբլի տարեկան ուժեղի: (Այս գումարից 120 ռուբլին անցեալ տարվայ հողաբարձուներից ունեւր աղին խօսքով դերապատիւ նախկին փոխանորդ Սուրենեանց սրբազան հայր Գէորգ եպիսկոպոսի ներկայութեամբ պարտաւորված են իրանց սեփականութիւնից տալու). այս տարի 4 դասարան, նոյնչափ ուսուցիչ և ուսուցչուհի (8-ից երկուսը ձրի) 2,310 ռուբլի ուժեղի: Անցեալ տարի ընդամենը մօտ 100 կտոր ձեռագործի նոր նիւթեր պատրաստվեցան, այս տարի հենց այժմ 200 կտոր (համեմատաբար աւելի ծանր աշխատանք պահանջող) իսկ մինչև տարի վերջը կը հասնի դուցէ 300-ի: Անցեալ տարի դպրոցը ամենկին լրագիր չէր ստանում, այս տարի հինգն է ստանում: Շարունակ լինում է ուժեղների կանոնաւոր բաժանում և հենց այժմ էլ իմ օրով զուտ 700 ռուբլի դրամադուխ եմ տնտեսել, որ տրվում է տոկոսով. մեծադոյս եմ, որ մի այդքան էլ կը տնտեսեմ մինչև ներկայ ուսումնական տարվայ վերջը:

Գաղտնիս այս երրորդ անգամ այսպիսի կարճ միջոցում փառաւոր անձանց նախանձը չարժեւու չափ բարեկարգ վիճակի մէջ դնելու գործում—հրապարակով խոստովանում եմ—ինձ օգնողակ և օգնող եղել է Երևանի խղճմատաւոր հասարակութիւնը, որի լրագրութիւն համակրութիւնը ու աջակցութիւնը միշտ խրախուսել են և այժմ էլ իւրախուսում են ինձ: Որտեղ չը կան չարամիտ ու սևանախառն անհատներ, որոնք ի բնէ թշնամի լինելով բարեկարգութեան ու սուրբ գործի արդիւնաւորութեան, միշտ ձգտել են սուրբ գործը տապալելու, միամիտ ու հեշտահողի մարդկանց որսալով իրանց կողմը:

Ցանկանալով մեր հասարակութեանը լրջմտութիւն, ցանկանալով մեր մամուլի սպասաւորողներին հարցասիրութիւն և անաչառութիւն, միւսում եմ ընդ միշտ սուրբ գործին ճշմարիտ սրբտով և պարտաճանաչաբար օրնորդների կենաց և բարօրութեան համար արգիթող:

Նախագահ վարչութեան և տեսուչ Գայեանեանն դպրոցի՝ Յովսէփի աւագ քահանայ Մէլեանց:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ստացանք Վ.Ի.ՆԱ քաղաքում գետեղված հայերից 65 ռուբլի յօգուտ գէթնուցի հրկիզեալների: Խորագրատանը եղած 239 ռ. 86 կ. գումարի հետ ամսում է 304 ռ. 86 կօպ: Նուիրատուները զիտեանալով որ մեղ դժուար է նիւթի տեղ տալ նուիրատուների անանքների ցուցանիքները վճարել

են առանձնապէս յայտարարութեան համար, ինքնուրույն որ ցուցակը տպվի յայտարարութիւններէ բաժնուում: Ներկայ համարում տպում են ցուցակը յայտարարութիւններէ բաժնուում:

Արտասահմանեան հայ լրագրողներու կարգում ենք հետեւեալը: «Յաւ ի սիրտ կիմանանք, որ պ. Բաքալյէ Պատկանեան (Վաստա Բաքալյա), Կ. Պօլսէն իր հայրենիք, Նոր-Նախիջևան վերադառնալէ յետոյ, մէկ ամսի չափ հիւանդ պառկած է և այժմ Մօսկվա քնացնել է առաջնակարգ բժշկիչներէ դարմանվելու համար: Իր հիւանդութեան հետեանքն եղած է, որ պ. Պատկանեան լուրջութիւնը կորուսեր է: Թիֆլիսում հրատարակվող «Արձագանք» շաբաթաթիւթը արտատպելով այս լուրը իր զարմանքն է յայտնում, որ մեր մամուլը Նոր-Նախիջևանի թղթակիցներէն ոչ մին Պատկանեանի հիւանդութեան մասին ոչինչ չէ հաղորդում և աւելացնում է: «Կարող ենք հաւատացնել Նոր-Նախիջևանի բովանդակ բնակիչներին, որ եթէ նոյն իսկ Նոր-Նախիջևան քաղաքը կանհետանայ աշխարհիս երեսից, Բաքալյէ Պատկանեանի անուան դարձեալ լուսաւոր աստղի պէս կը փայլէ զրականական ասպարիզի վրայ: Ողբան անտարբեր հանդիսանան զէպի Պատկանեան նրա համաբաղբալները, այնքան նրանք յանցաւոր կը համարվեն ապագայում»:

Ստացանք յօգուտ Զէյթունի հրկիզեալների թիֆլիսի մի քանի հայ աշակերտներէ 11 րոպէի Նախիջևան փողի հետ անում է 315 ր. 86 կ:

Իր.Գ.Իրից մեզ գրում են. «Մեզ մօտ կարմուռկ տարախոթիկ հիւանդութիւնը դեռ չարունակում է մանուկ սեղանից մօտ քանակութեամբ զօրեր տանել: Իդրիւում օր չէ անցնում, որ մի երկու մանուկ գերեզման իջած չը լինեն: Վերջին տեղեկութիւններն նայելով խոշորաբար, 250 տուն ունեցող գիւղումն էլ, կարմուռկն զոհ են դնացել կարծ ժամանակում աւելի քան 150 երեխայ»:

ԿՈՂԲ գիւղից մեզ գրում են, որ այդտեղի մանուկների մէջ էլ խիստ շատ մեռնողներ կան կարմուռկ հիւանդութիւնից:

Կոմս Լեոն Տօյստօի նոր պիէսան «Власть Тьмы» (Խաւարի իշխանութիւնը), այս օրերս ներկայացվեցաւ Փարիսի լեզուով Փարիզի թատրոններից միում: Ֆրանսիական մամուլի մեծ մասը ասում է թէ պիէսան շատ ծանր, նոյն իսկ անսովոր տպագրութիւն է գործել հանդիսականների վրա: «Եթէ հաւատանք հեղինակին, ասում է Ֆրանսիական «Figaro» լրագիրը, պէտք է ընդունենք որ ռուսաց ժողովրդի ստորին զիւղական դասակարգը ամբողջութեամբ բաղկացած է արեցող, ապականված, յանցաւոր մարդկանցից»:

Բայց և Ֆրանսիացի հեղինակ Զօլա «La terre» վերնագրով իր վերջին բօմանի մէջ նկարագրում է Ֆրանսիական ամբողջ ամենամութ գոյներով:

ԱՍԱԼՔԱՒԱՔԻՅ մեզ գրում են հետեւեալը: «Աւաղաքաբնէր շատ են ցանկանում իրանց մօտ մի քաղաքային ուսումնարան բանալու, բայց դժբաղդապէս դրա համար բաւականաչափ նիւթական միջոցներ չունեն և իրանց ամբողջ յոյսը դրել են կառավարութեան օժանդակութեան վրայ»:

Մեզ գրում են, որ այս տարի ԱՍԱԼՔԱՒԱՔԻՅ քաղաքային դեպուտատն եր ընտրվեցան երկու եւանդոտ երիտասարդներ, պ. Կ. Իվան և Թարութիւնեան և Թովանդէս Աւանանց, որոնց գործունէութեան վրա մեծ յոյս են դնում քաղաքացիք:

Ասխաբաղից մեզ գրում են. «Անցեալ յունվար ամսի 28-ին Ասխաբաղից քնաց Պետերբուրգ գեներալ Կամարով: Գնալուց բանի մի օր առաջ այստեղի ազգաբնակչութեան կողմից յանձնվեցաւ նրան 500-ից աւելի ստորագրութեամբ մի խնդրագիր, որի նպատակն է Ասխաբաղը դարձնել նահանգական քաղաք»:

Փետրվարի 7-ին Պետերբուրգում տօնվեցաւ իրական բժշկական կուրսերից աւարտողների առաջին շրջանի տասնամակը: 1878 թականին, փետրվարի 7-ին կանանց բժշկական կուրսերից աւարտեցին աւելի քան 50 կանայք, դրանց մեծ մասը մինչև այժմ էլ բժշկականու-

թեամբ են պարապում և բաւական լաւ բնորոշութիւն են գտել հասարակութեան մէջ իրանց աջող բժշկական գործունէութեամբ:

Ռուսաստանից չարունակում են գալ գաղթական ընտանիքներ զէպի Անդրկովկաս: Այգպիսի գաղթականներն մի նոր խումբ այս օրերս եկաւ Թիֆլիս, և անցաւ զէպի Կարսի նահանգը:

Վաղը, չորեքշաբթի, փետրվարի 17-ին, Թիֆլիսի աղետական կալուածական բանկի թատրոնում ռուսաց դրամատիկական խումբը յօգուտ թատրոնի կասսի, պ. Ալէքսանդր Մերկանիցի կը ներկայացնէ «Простая история» դրաման 5 գործ., հեղ. ի. Վ. Զաքարիայն և «Старый математик» զուգարձի ֆարս-վոդևիլը: Պ. Ալէքսանդր Մերկանիցի բաղմամբ ծանօթները և բարեկամները, մանաւանդ առևտրական շրջանից, անկասկած կայտատեն վաղվայ այդ ներկայացմանը ներկայ գտնվելու:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱՆԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՖԲԱՆՍԻԱՅՈՒՄ

Մենք ուրիշ անգամ առիթ ենք ունեցել ասելու, որ կանանց աշխատութեան և կանանց իրաւունքների հաւասարութեան խնդիրը պէտք է հիմնովի զլխաւորապէս կանանց աշխատանքի կամ ուրիշ խօսքով, իզական սեռի տնտեսական անկախ կեցութեան վրա: Այդ տեսակետից նայելով, հետաքրքիր է թէ ինչ դրութեան մէջ են Ֆրանսիայում կանայք: Այդ հետաքրքրութեանը գէթ մասամբ լուծելու կարող են տալ կանանց աշխատանքին վերաբերեալ այն տեղեկութիւնները, որ հաղորդում է «Economete Francais» ամսագիրը: Դեռ 1877 թականից մինիստրութեան ցանկութեան համեմատ, փոստային վարչութեան զլխաւոր դիւանատանը կանայք սկսեցին զանազան պաշտօններ ստանալ: Փոստային վարչութեան ծառայութեան մէջ կանայք իրանց ընդունակութեամբ խիստ շատ առաջ գնացին, և այդ բաժնում պաշտօն վարող կանանց թիւը արդէն հինգ հազարից անցնում է: Դրոցա ստացած ռոճիկը ամենաբնիկը 800 ֆրանկ է, իսկ ամենաշատը 4,000 ֆրանկ: Փոստային վարչութեան մէջ ընդունված են 18 տարեկանից մինչև 35 տարեկանի կանայք, իսկ հեռագրական բաժնում ընդունվում են 16—25 տարեկանները: Այդ պաշտօնների թիւնամուները ենթարկվում են որոշ քննութեան: Երեսուց տարի ծառայողները լիակատար թշուալ ստանալու իրաւունք ունեն:

Բացի դրանից կանայք պաշտօն են վարում և ուրիշ շատ հիմնարկութիւններում: Երկրամուշակի վարչութիւններում կանայք շատ պաշտօններ են վարում, շատ տեղ երկրամուշակի դիւանատան բոլոր ծառայողները կանայք են և այդ այն պատճառով, որ այդ պաշտօնները կանայք վարում են օրինակելի ճշգրտութեամբ: Քիչ չեն կին-պաշտօնեաները և բանկերում, որտեղ նոքա շատ անգամ աւաստար պաշտօն են վարում տղամարդկանց հետ, ստանալով նոցա հաւասար ռոճիկ և վարձատրութիւն: Կին ծառայողներ կան բաւական թիւով և ֆինանսների մինիստրութեան մէջ, չը հաշվելով այն կանանց, որոնք անկախ և սեփական գործեր են կատարում: Թէ մասնաւոր և թէ պետական ծառայութեան մէջ եղող կանայք Ֆրանսիայում յայտնի են առհասարակ իրանց հմտութեամբ, ճշգրտութեամբ, մաքուր աշխատանքով, և այդ բոլոր յատկութիւններով նոքա տղամարդկանցից աւելի բարձր են կանգնած, թէ և չունեն վերջինների ինքնուրոյնութիւնը, որը անհրաժեշտ է բարդ աշխատանքների կատարելու համար:

Բայց համեմատելով կանանց աշխատանքի այդ բոլոր ճիւղերը՝ նոցա մանկավարժական գործունէութեան հետ, պէտք է ասել, որ վերջինը անհամեմատ բարձր է, վերջինի մէջ կանայք շատ առաջ են գնացել: Մանկավարժական ասպարիզում գործող կանանց թիւը համեմատել չէ կարելի ուրիշ պաշտօնների վարող կանանց թիւի հետ: Ֆրանսիական դպրոցներում կանայք շատ մեծ դեր են կատարում: Ստորին և բարձր ուսումնարաններում պաշտօն վարող կանանց թիւը 35 հազարից անցնում է: Ընդհանուր առմամբ, Ֆրանսիայում մանկավարժական գործունէութեամբ զբաղվող կանանց թիւը 100 հազարից անցնում է, մինչդեռ նոյն գործով զբաղվող տղամարդկանց թիւը 90 հազարից չէ անցնում: Մանկավարժա-

կան ասպարիզի վրա կանայք կատարեալ յաղթութիւն են տարել: Ցանկալի է, ի հարկէ, որ նոյն յաղթութիւնը նոքա ունենան և միւս ասպարիզներում:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Բօլշարական խնդիրը արդէն նոր շրջանի մէջ է մտնում: Եւրօպական մի քանի կառավարութիւնների տրամադրութեանը նայելով՝ կրկին հանդէս պիտի գայ ոչ թէ միայն Կօնստանդուպէրից, այլ նոյն իսկ նոր իշխանի ընտրութեան հարցը: Այդ իրողութիւնը, ի հարկէ բօլշարական խնդիրը նորից կը դարձնէ առաջնակարգ խնդիր եւրօպական դիպլոմատիայի համար:

—Պօզնանը գերմանացիները գործը առաջ է գնում, գերմանական կառավարութիւնը ամեն միջոց գործ է դնում իր նախագիծը իրագործելու և դրա համար մինչև անգամ զէնք է դարձրել կաթիլի հողեղանակութիւնը: Այդ պատճառով Պօզնանի լեհ ազգաբնակչութեան մէջ վերջին ժամանակներս սկսել է երևան գալ մի խուլ բողոք և ատելութիւն զէպի պապը և զէպի նրա յարաբերութիւնները իշխան Բիսմարկի հետ:

—Փարիզում, ինչպէս երևում է, զգուշ են որ զուցէ մինիստրական փոփոխութիւն կը պատահի շատ շուտով: Արդէն խօսք կայ և այն մասին, թէ ով յանձն կառնի նոր մինիստրութիւն կազմելու:

—Վիեննայից հեռագրում են հետեւեալը. «Բէյ-Խարատի մէջ ծննվում է մի առաջարկ, որի նպատակն է որոշել այն միջոցները, որոնցով կարելի կը լինի հարկաւոր զէպըրում ռուսաւորական խառնակութիւններին առաջն առնել»:

—Մարդիկից գրում են, որ զուցէ շուտով Սպանիան էլ կը միանայ եւրօպական երեք պետութիւնների դաշնակցութեանը:

—Մի քանի միտնաց վրա բարդված հարցերի ընդունակեան պատճառով Աւստրիական իշխարատի վերջին նիստերը շատ աղմկալի կերպարանք են ստացել: Ինչխարտը պաշտպանող պոլիցիականներ թիւը մեծացրած է, և մուաքի տոմսակները այժմ շատ քիչ են բաժանվում: Ապատմիտ կուսակցութիւնը անագին աղմուկ բարձրացրեց զըպրոցական հարցի առիթով և ներկայացրեց մի նախագիծ, որով խնդրում է մերժել իշխան Լիխտենշտեյնի առաջարկը՝ ժողովրդական զգրոցները հոգեղանակութեան ենթարկելու մասին:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Բանից երևում է, որ ոչ թէ միայն իշխան Բիսմարկի ճառն է հետաքրքրում եւրօպական շատ լրագրողներին, այլ և նրա անձին վերաբերեալ շատ ուրիշ բաներ. մի ժամանակ Բիսմարկի շուրջը առանձին ուշադրութիւն էր դրուել, այդ չափ մահը քիչ էր մնացել քաղաքական նշանակութիւն էր ստանում: Մարդիկ հետաքրքրվում են ոչ միայն Բիսմարկի գրածներով և խօսեցածներով, այլ նոյն իսկ այն գրչով, որով նա գրում է, այն բաժանով, որով նա ջուր է խմում, այն աստիճանով, որի վրա նա նստում է, և մինչև անգամ այն ուսելիքներով, որ նա ուսում է: ԶԶԶ հաւատում և կարգացնէ թէ ինչ են հաղորդում լրագրողները: «Այս օրերս իշխան Բիսմարկ ընծայ ստացաւ 20 ֆունտ խաւանք: Մնում է միայն սպասել, որ լրագրողները հաղորդեն, թէ Բիսմարկ ինչ խնդրեցաւ կերպաւ այդ խաւանքը...»

Փարիզում, զլխաւորապէս թատրոններում նորերում երևան եկաւ մի զարմանալի նորութիւն: Բաւական լաւ հայնված երիտասարդներ, իրանց ձեռքին բռնած գիղեղիկ ձեռնախալտեր, պտտում են հասարակութեան մէջ. այդ ձեռնախալտերի ծայրերին կցրցած են փղերիկ սպունգներ, որոնք թաթախված են այնպիսի մի հեղուկով, որը չորի դիպած ժամանակ՝ այրում, ուսում է այդ չորի: Ամեն անգամ երբ այդ սպունգը դիպչում է մի շորի, ուսում և ծակում է շորը և այդպիսով անպէտք է դարձնում նրան: Սկզբում շատ կանայք տեսնելով որ իրանց շորերը այդպէս ծակվեցած են, կարծում էին թէ դա պատահական մի բան է, և հետեանք չէ շրջովի ֆրանսիական շարութեան Բայց երբ աշողվեցաւ այդպէս անողներից մէկին բռնել և ասնել ոտակաւորաւորում, և երբ նրան հարց ու փորձ արեցին, նա պատասխանեց՝

—Ես մի մօղային խանութի գործակալատար եմ: —Ինչու էք փչացնում շորերը, հարցրին նրան. —Որպէս զի մեր առևտուրը լաւ գնայ, պատասխանեց նա:

Մայրաքաղաքի լրագրողներից մէկի ամէրիկական թղթակից՝ Մակ-Գահան գրում է, որ շուտով Նոր-Եթիօում տեղի կունենայ մի հետաքրքիր դատաստանական գործ, որ ամբողջ Նիւ-Եթիօ թարգմանիչների միջնորդութեան հիման վրա:

Ռարկայ է: Այդ դատաստանական գործի բովանդակութիւնը հետեւան է: Մի, թէպէտ և զեղեցիկ, բայց հասակ առած օրիորդ—Միս Կէմբէլ—որի տարիքը 39-ից արդէն անցնում էր, դատաստանով հարկւր հազար դոլար է պահանջում: Զարկ Արքէնկիւ անունով մի 55 տարեկան միլիտանտէր մարդուց: Այդ օրիորդի կրած վնասները իր ընթաց զգացմունքները վիրաւորելու մէջն են կասնում: Վերջինեալ հարուստ միլիտանտէրը, որը իր ձեռքը և սիրտը առաջարկել էր օրիորդ Կէմբէլին, հրաժարվեց պատկզիլ նրա հետ՝ այն ժամանակ, երբ այդ օրիորդի հայրը աղքատացաւ: Իսկապէս ասած, այդպիսի դատաստանական գործեր, երբ օրիորդը վարձատրութիւն է պահանջում իր ընթաց զգացմունքները վիրաւորելու փոխարէն, շատ յաճախ են պատահում: Նիւ-Եթիօում: Մանաւանդ հետաքրքիր է այդ անշատված զոյգի մտերմական գրադրութիւնը: Մեծ էր Նիւ-Եթիօի հասարակութեան զարմանքը, երբ երգուեալ դատաստանները ձեռնեցին պահանջել միլիտանտէր Արքէնկիւից 45,000 դոլար յօգուտ օրիորդ Կլարա Կէմբէլի, և հազար դոլար դատաստանական ծախսեր: Բաւական լաւ դաս է տղամարդկանց համար:

Վիեննայի մի ձուլարանից Կ. Պօլիս են ուղարկված 12 զանազան մեծութեան զանգալներ Սուլթանի պալատի համար:

Ֆրանց-Յոլսէփի բառասանամայ յօրեխանի առիթով աւստրիական կայսրը ընդհանուր ներումն չորհեց, բայց անիշխանական յանցանքների համար դատապարտվածներին:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍՏՈՐԻԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 փետրվարի: Կառավարչական երկկապ հաղորդագրութեան առիթով «Journal de St. Petersburg» ասում է. «Հաղորդագրութեան մէջ յայտնված պրօգրամը վկայում է, որ Ռուսաստանը ունի ամենախաղաղասիրական դիտաւորութիւններ, որ նա ցանկանում է վերականգնել օրինականութիւնը Բօլշարիայում բարոյական հեղինակութեամբ և չէ էլ մտածում ձեռնամուկ լինել նրա անկախութեանը: Պետութիւնները, որոնք անկեղծ կերպով ցանկանում են խաղաղութիւն, չեն կարող հրաժարվել ազնւարար պաշտպանելու այդ ջանքերը, որոնք ուղղված են զէպի ընդհանուր հաշտութիւնը: Նոյն լրագիրը միջոց ունի յայտնելու, որ կայսերական կառավարութիւնը ոչինչ չըջարեալական չէ տարածել բօլշարական հարցի առիթով:

ԼՈՆԴՈՆ, 12 փետրվարի: Լրագիրները ընկելով ռուսաց կառավարչական հաղորդագրութիւնը բօլշարական հարցի առիթով, խոստովանում են Ռուսաստանի չափաւորութեան մասին: «Times» լրագիրը ասում է որ այնու ամենայնիւ այդ հաղորդագրութիւնը կարող է համարվել յաջող բանակցութիւնների սկզբնակէտ և իսկական ճգնաժամը կարող է ծագել միայն այն ժամանակ, երբ Ռուսաստանը իր ցանկութիւնների իրագործման միջոցների մասին հարց կը յարուցանէ: Լօրդերի պալատում մարկիզ Սալսբրի արտասանեց մի ճառ բօլշարական հարցի առիթով: Նա ստեց որ այնքան արդար էլ չէ մեղադրել բօլշարներին ապօրինի վարմունքների մէջ: Սալսբրի կարծիք յայտնեց, որ բօլշարական հարցի առիթով համաձայնութիւն կայացնելը դիւրին բան չէ: Կօնգրէս կամ Կօնֆերենցիա գումարելը անյարմար է, որովհետև հազիւ թէ կարելի լինէր յոյս դնել պետութիւնների միահամուռ գործողութեան վրա. այդ միջոցը կարող է մինչև անգամ աւելի մեծ վրէժանք առաջ բերել քան թէ այն փոխադր. որ գոյութիւն ունի այժմ Աւելի նպատակաւորամբ են բանակցութիւնները կարելիւնների մէջ և պէտք է յուսալ, որ այդ ճանապարհով աւելի հեշտ կը լինի կարծիքների մէջ այժմ գոյութիւն ունեցող տարաձայնութիւնները հաշտեցնել: Սակայն Սալսբրի ամբողջ սրտից միանում է իշխան Բիսմարկի յայտնութեանը, որ եւրօպական պատերազմ Բօլշարիայի պատճառով ամօթ կը բերել Եւրօպային:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 փետրվարի: Բարձրագոյն հրամայված է. ժողովրդական թատրոններում, կամ թէ այնպիսի թատրոններում, ուր դնի է ծախսութեան պատճառով յաճախում են զլխաւորապէս հասարակ դասակարգի մարդիկ, ներկայացնել զբանիչի կողմից թուլ տրված միայն այն պիէսաները, որոնց համար կը ստացվի մամուլի զլխաւոր վարչութեան թոյլտուութիւնը: Թատրոնների պահողները, կամ հեղինակները ու թարգմանիչները միջնորդութեան հիման վրա:

